

134910

891.99

U-39

391 99

1

15-39

ԱՆՓՈՐԱ ԳԵՈ

(ԳԵՈՐԳ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ)

ՎԱՐԴ ԵՒ ՍՈԽԱԿ



2003

Տպարան Մ. Շարաձէի
Типография М. Шарадзе
1895

Дозволено цензурою Тифлисъ, 22 Февраля 1895 года.



78166
78163
1222-87



3

ՆՈՒԷՐ ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ԼԵՒՈՆԻԿԻ
ԹԱՆԳԱԳԻՆ ՅԻՇԱՏԱԿԻՆ.



յն կիւրակին չեմ մոռանալ
Երբ մեծ հարուած դիպաւ սրտիս
ինչպէս կարողեմ մոռանալ
Յանկարծ մնաւ քրոջս որդին...



Նքդ սիրուն ես, լեզուդ է ճարտար
Թող հոգիս դուրս գայ, Նինա, քեզ համար
Դու ինքդ ծաղիկ ես, հոտդ է անոյշ
Ինչու ես պտուղւմ վարդը առանց փուշ

Բոյիդ չինարի, ձայնդ դեղեցիկ
Դու ես աշխարհում ամենաերջանիկ
Աչքերըդ մեծ մեծ, ունքերըդ կամար
Կեանքս կը զոհեմ, Նինա, քեզ համար:

Քո գլխին ղուրբան
Իմ սիրեկան ջան

Քո այդ պռօշներ
Եւ քո սեւ աչեր

Նոյնպէս թշերըդ
Երկայն մազերըդ

Հոգիս են հանում,
Իմ Նազլու խանում,

Այս օր է թէ վաղ
Ես առողջ եւ սաղ

Քեզ կը լինեմ մատաղ
Կը մտնեմ դազանդ:

12, Մայիսի 1886.



Ինար որ ըարծրացել ես
Տուած օգուտդ ինչ է°
Ոչինչ ստուղ չես տալիս
Հպարտութիւնդ ինչ է°:

15, Մայիսի, 1887.



Ախ կարմիր վարդ, կարմիր վարդ
 Որ դու անթառամ լինես
 Զո քլքուլին ամեն վախտ
 Դու քո մօտը կ'տեսնես:

29 Օգոստ. 1888 թ



Ա Ն Ց Ա Ի Ո Ր Ա Շ Խ Ա Ր Հ.

Սիրուն սիրեկան ունէի
 Թռչունի պէս թռաւ գնաց:
 Մի լաւ շինած տուն ունէի
 Էն էլ քանդվեց բան չմնաց:
 Ես մնացի թշուառական
 Այս աշխարհս անցաւոր է
 Ման եմ գալիս անտիրական
 ձանապարհս փշաւոր է:
 Փառքը բնաւ չի օգնի
 Եթէ որ մահը մօտենայ
 Հազար գուղէ հարուստ ըլի
 Մահից պրծնիլ չի կարենայ:

15 Մայիսի, 1887.



Կ Ա Խ Է Թ Ո Ւ Գ Ի Ն Ի



Մի կախէթու անուշ գինի
Քեզ խմողը կ'լինի զուարթ
Թէ հարուստ լինի թէ աղքատ
Ս.Մի կախէթու անուշ գինի:

Թէ սև թէ սպիտակ լինես
Ինչ մօտ դու յարգանք ունես
Հաց չեմ ուտի առանց քեզ
Ս.Մի կախէթու անուշ գինի:

Երբ քեզ քիչ աւել խմեմ
Ուրախանում է սիրտ իմ
Հէնց զիտեմ աշխարհիս տէրն եմ
Ս.Մի կախէթու անուշ գինի:

Երբոր սեղանին բազմած
Մի քանի մարդ նստոտած
Խմում են մէկ մէկու կենաց
Քեզ կախէթու անուշ գինի:

21 Մայիսի 1888.



Ինչ ես ծաղրում որ ես տրտում
 Մանեմ գալիս յուսահատ
 Իսկ դու ուրախ ես անպատում
 Ապրում ես անհոգ և զուարթ:
 Մի կարծի թէ ամենայն օր
 Տատը գաթա կըբերի:
 Կըգայ ժամը երբ ես զուարթ
 Իսկ դու տխուր կըշրջես
 Եւ կ'լինես յետին աղքատ
 Ուրիշներից հաց կ'ուզես:
 Ինչէս կարծում ամենայն օր
 Տատը գաթա կ'բերի:

3 Ապրիլի, 1888.

ԻՄ ՍԻՐԱԾ ԱՂԶԿԱՆ,

Ձեմ ուզում որ հեռանաս
 Ինձանից մի ըոպէ, աղջիկ.
 Խնդրումեմ քանի կարաս
 Իմ սիրտը շահէ, աղջիկ:
 Նազանելդ ինչէ ետրաբ
 Սև աչքաւոր սիրուն աղջիկ
 Իմ սիրտը արիւր խարաբ
 Խուճուճ մազերաւոր աղջիկ:

13 Փետր. 1886.



Ինչ անեմ ասէք իմ սիրեկանին
 Որ կրակ է գցել մէջ իմ ջանին
 Մէք քարով էլա ինձի չէ տալիս
 Ինչ անեմ ասէք այդպէս անգութին:

13 Փետր. 1886.



ՀԱՐՈՒՍ ԵՒ ԱՂԲԱՏ



արուստը իրա կեանքում
 Բանի կարօտ չի քաշի
 Աղքատի պէս ամէն բանում
 Խորը ախեր չի քաշի:

Ինչ որ ուզեց կը ճարի
 Սրտումը դարդ չի մնայ
 Աղքատի պէս անճարի
 Դռնէ դուռը չի դնայ:

Տունը շքեղ զարդարած
 Լիքը ամեն բարիքով
 Աղքատի պէս պատուած
 Ձի մանգալի վարտիկով:

Սնդուկը լի ոսկիով
 Բնաւ չունի խղճմտանք
 Աղքատի պէս տուրակով
 Ձունի հացի կտորտանք:

11 Հոկտ. 1887.



ՍԻՐԵԿԱՆ:



Խ սիրեկան, սիրեկան
 Ինձ հետ կապիր քո սէրդ
 Շատ ես ինձ դուրեկան
 Ես եմ իսկը քո տէրդ:

Թշերդ վարդի պէս
 Սև սև աչքերով
 Սիրտս կրակել ես
 Էդ քո նազերով:

1222-87



Մուժը սենեակում
 Միայնակ նստած
 Քեզ եմ սպասում
 Իմ սրտիս սիրած:

Արի սիրեկան
 Ինձի մի տանջիր
 Թուժակ ես խօսկան
 Աղաչանքս իմացիր:

14 Յուլի. 86 .



Վաղուց է որ չեմ տեսել
 Ես այն սիրուն օրիորդին
 Նորա համար եմ տխրել
 Որ նա տիրել է իմ սրտին:

Օրօրուելով ման է գալիս
 Սիրուն աղունակի պէս
 Սև աչքերը փայլ է տալիս
 Երկնքի արեգակի պէս:

Վարդի պէս կարմիր թշերով
 Բույին բարձր չինարի պէս
 Դուրս է գալիս գիշերով
 Պայծառ լուսնիակի պէս:



արտիզում զբօսներիս երեկ
Տեսայ սոխակին վարդի վրայ նստած
Սկսայ մտաբերել մէկ մէկ
Իմ օրերըս անցուցած.

Մտածումէի շատ տխուր
Իմ քունս տարաւ յանկարծ
Ահա մի աղջիկ ձեռքին սուր
Իմ առաջս է կանգնած:

Կամենում է ինձ մօտենայ
Իրա սրովը խփել
Տեսայ թէ չէ ոտքը ընկայ
Սկսեցի աղաչել:

Բայց անգութ այն աղջիկը
Զուգեց անգամ ինձ լսել
Եւ սկսեց անգթաբար
Ողջ մարմինս կտրատել.....

19 Սեպտ. 1887.



Ես բաղկացած եմ երկու հատորից
Մէկը դու ես, մէկ ես եմ, սիրելի
Իմ սիրտը ունի կախում քեզանից
Միթէ այդ Դու չես հասկանում, սիրելի:

Սրտիս մէջ վառվում է անշէջ
Գիտեմ քո սէրն է սիրելի
Ընկե՛լ եմ անբաղտութեան մէջ
Պատճառը Դու ես սիրելի.

Գիշերը պառկելիս չեմ կարում քնել
Որովհետեւ իմ մօտս չես սիրելի
Միթէ սիրոյ բանը Դու չես ըմբռնել
Խղճա դու ինձ մեղք եմ սիրելի:

Թէ դու էլ ինձ սիրել խոստացար
Ինչո՞ւ խաբեցիր խեղճիս սիրելի
Միթէ դու իմ վատս իմացար
Որ չ'կատարեցիր խոստումդ սիրելի:

Ինչ գուզես արա ես քեզ սիրում եմ
Մինչեւ մահս էլ պիտի սիրեմ սիրելի
Կարծեմ թէ կրակում այրվում եմ
Տես էլի չեմ փօշմանում սիրելի:

Բայց երբ կ'գայ վերջին ըոպէս
Դարձեալ կ'մտաբերեմ-ես քեզ սիրելի
Գլուխս կ'բարձրացնեմ կասեմ սիրում եմ
Յետոյ կ'աւանդեմ հոգիս սիրելի:

27 Մայիսի 1887



Քարկեցիւր սրտիս մէջը սիրոյ նետը
 Իմ սիրեկան ջան հերիք է երես
 Գուզես ինձի տար ձգէ գետը
 Թաք տեսցուր ինձի քո չքնաղ երես:

Ամբողջ օրը անց եմ կենում ձեր դռնովը
 Տխուր տրտում բանս գործս թողել եմ
 Գուզես ինձի տար ձգէ ծովը
 Թաք տեսցուր ինձի քո չքնաղ երես:

Ես հանգիստ չունիմ և ոչ մի բոս
 Որովհետեւ ինձնից հեռու ես փախչում
 Թէ գուզես ինձի կեանքէս էլ զրկէ
 Թաք տեսցուր ինձի քո չքնաղ երես:

28 Մայիսի 1887.

ՀՕՐՍ ՎԱԽՃԱՆԸ

Հազար ութ հարիւր ութսուն և հինգ թուին
 Հով օր էր Ապրիլ ամսի տասն և մէկին
 Պայծառ փայլում էր երկնից լուսին
 Կէս գիշերուայ ժամի երկուսին:

Ես արթուն էի, քունըս չէր տանում
 Նստած էի մեր տան մի պատուհանում
 Զանազան բաներ էի միտք անում
 Զբաղուած աստղերին էի նայում:

Տեսայ մի փայլուն աստղ վայր ընկաւ
 Դէպի հիւսիս նա վայր ընկաւ
 Քիչ նայեցի միւս աստղը թռաւ
 Զը տեսայ որ կողմը վայր ընկաւ:

Մի քանի ընկալե չ'անցկացաւ
 Հայրս շատ և շատ նեղացաւ
 Ախ քաշելով իւր մահկանացուն տուեց
 Եւ յաւիտենական քնով նա քնեց:

28 Յունիսի 1885.



ՆՈՒԷՐ Կ. Մ. ԱՅԻՆ: (Դաւալ Հաբի)



եղ ով ասաւ սիրեկանի մօտ գնաս
 Որ կսկիծով ու լացով քո տուն գաս:
 Կը խրատուես միշտ տանդ կ'մնաս
 Դու աշխատիր միւսանգամ էլ չ'գնաս:
 Արի եղբայր մի հեռանայ քո տանից
 Ականջ արա մի ծուլանայ քո բանից:
 Ամօթ քաշէ քո ընկեր տղայից
 Աւելի շատ քո հարազատ ծնողից:

Եղբայրաբար ասածիս թէ չ'լսես

Տես որ լետոյ դու ինքդ չ'փոշմանես:

Ես էլ էի մի ժամանակ քեզի պէս

Մուղայիդ կաց գլխիդ չարէն տես:

Խորհուրդ եմ տալիս եղբայրաբար քեզ

Քո բարի կամեցող ընկերդ եմ ես:

10 Յունիսի, 1886.



Գ. Ն. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ ՅՕՐԵԼԵԱՆԻՆ:

Ամբողջ քառորդ դար անդադար գործել
Մեր-Հայոց բեմը դու ես զարդարել.
Ազատ ժամերըդ նորան ես զսհել
Հայերի համար կեանքդ չես խնայել:

Քսան ու հինգ տարին անցել է արդէն
Քո շատ ազգօգուտ գործունէութեան,
Եւ ահա այսօր Հայ ազգի սրտէն
Լսուում են որքան ձայներ բերկրութեան.....

Շտապում եմ և ես խորին յարգանքով
Շնորհաւորելու Քո յօբելեան
Ազգը կ'լիշէ Քեզ միշտ պարծանքով
Կեցցէ մեծ տաղանդ, կեցցէս Սունդուկեան:

1 Յունի, 1889.

ԻՄ ՄՆԱՍ ԲԱՐԵԱԼԸ



Մնաս բարեալ իմ թանգագին
 իմ սիրելի դու մայր անգին
 Մնաս բարեալ իմ հարազատ
 Քույր մի տխրիր դու շատ

Մնաք բարեալ իմ եղբայրներ
 Մնաք բարեալ և ընկերներ
 Գուցէ դարձեալ չտեսնենք
 Բոլորովին միմեանց մենք.

Մնաս բարեալ իմ սիրելի
 Բայց չ'մոռանաս դու ինձ
 Քո պատկերը անջնջելի
 Սրտումըս կը մնայ միշտ անջինջ:

Մնաս բարեալ և դու Տփիսիս
 Միշտ կաց զուարթ չ'թառամիս
 Քո օղբ և ջուրը ես չեմ մոռանալ
 Իմ հայրենիքին ես չեմ ուրանալ:

24 Հոկտ. 1889.



Հոգիս մի հանի

Շուտ մօտս արի,

Դէ շուտ շուտ արի.

Փայտոնով արի

Վազտալով արի

Կարետով արի

Կարօտ եմ եարի

Շուտ այստեղ արի

Խնդրեմ շուտ արի

Ծափտալով արի

Թէ այդ չես անի

Շուտ հոգիս հանի:

13 Յունիսի 1886.

Քեզ տեսալ բաղում

Դէմքդ փայլ էր տալիս

Ով նայում է աչքը ծակում

Կարծում են քեզ ոսկի-խալիս:

Այդ քո սև մազերդ

Մէջքիդ փռած զարդ է տալիս

Եւ քո այդ սիրուն աչերդ

Ամենին շատ դիւր է գալիս:

26 Յունի. 1886.





Եմ համբերում ոչ մի տեղ
Եարիս ածա քիչ քո դեղ
Սառ ուրտեղ քեզ սպասեմ
Քո պատկերը երբ տեսնեմ:

Այդ ինչ կաբա ես հագել
Վզիդ հուլունքներ շարել
Իմ խելքը դու ես տարել
Իմ վերջը դու ես դառել:

23 Յունի. 1889.



ղջիկ քո սյդ սեւ սեւ մազերդ
Ինձ խեղդումն սիրուն ունքերդ
Վարդ թշերդ, մեծ մեծ աչքերդ
Ինձ սպանումն թերթերունքներդ:

13 Օգոստ. 1885.





Նրբ աչքերումդ նայումեմ
Տեսքովդ ուրախանումեմ
Երբ համբուրումեմ քեզ
Բոլորովին առողջ եմ ես:

Երբ կ'թափի արտասուքս
Եւ կ'ը դրչի շորերս
Ես քեզ գրկած ձեռով
Թող մեռնեմ տանջանքներով:

3 Ապրիլի. 1886.



Նչ ես չարչարում
Դու իմ սիրահար
Շուտ ինձ մօտ արի
Կամ ինձ քեզ մօտ տար:

Ես չարչարվումեմ
Ամբողջ հինգ տարի
Եւ քեզ խնդրումեմ
Շուտ մօտըս արի:

13 Օգոստ. 1888.

ՆՈՒԷՐ Ա. Ն. Մ.—*ցին*։

Ըմ անգին ընկեր, արի ինձ լսիր
Քնքոյշ օրիորդին դու մի մօտենայ
Սև աչք ունեցողի հետը մի խօսիր
Այդպէսիններից միշտ հեռու մնայ։

Սև աչքերովը նա քեզ կ'գերէ
Քաղցր խօսքերով քո սիրտը կ' էրէ
Երկայն մազերով քեզ կ'կախարդէ
Փափուկ ձեռքերից էլ բաց չի թողնի։

29 Նոյեմ. 1889.

ՀԷՅՆԷԻՑ։

Ինչու, ասա ինձ սիրելուհի
Վարդերը այսպէս խաւարեցան։
Ինչու, կանաչ մանիշակները
Լռեցան և շատ տխրեցան։

Ինչու, երգում է ցաւալի
Թռչնակը կապոյտ երկնից-
Ինչու, հոտը գերեզմանի
Բուրում է նաղչոյն ծաղիկներից։


Ինչու բարկացած սառնասիրտ
Նայում է դաշտերուն արևը
Ինչու, դատարկ և խաւար է խիստ
Գերեզմանի պէս բոլոր հողը։

Ինչու. ասա ինձ սիրելուհի,
Ինքս տխուր եմ և հիւանդ,

Ինչու իմ աննմանուհի

Դու ինձ թողիր, այդ է դիւանդ:

16 Ապրիլի.



ՀԻՅՆԷԻՑ:



Իռնաւորուած են իմ բոլոր երգերս
Ուրիշ տեսակ չէր կարող լինել,
Դու կարողացար ծաղկող կեանքս
Ինձանում վատ թոյնով թունաւորել:

Թունաւորուած են իմ բոլոր երգերս
Ուրիշ տեսակ չէր կարող լինել
Ես դատապարտուած եմ տխրած սրտումս
Եւ օձ և սիրելուհուն կրել:

19, Ապրիլի. 1887.

Ասում է մենք հարուստ ենք
 Մեծ տներ էլ ունենք
 Գնացի տեսայ նրանց տուն
 Էնպէս էր որպէս հաւաքուն:

8-Փետր. 1885



ղջոյն քեզ լուսնեակս իմ
 Ի սրտէ ողջունումեմ քեզ ընկեր իմ.
 Դու Սիրեկանս շատ ես սիրուն ու փափուկ
 Քո պատկերին նուիրու եմ իմ արցունք:

Քեզ համար պատրաստելեմ գեղեցիկ պալապ
 Դու լուսնեակս կարող ես ապրել ազատ
 Ոչ ոք չի կարող քեզ խանգարել
 Ծառաներիդ հրաման կ'տաս բանդ կատարել

Ոտըդ ամենեւին չի դիպչի գետին
 Առատ կ'տաս ողորմութիւն աղքատին
 Բարերարութիւն կանես դու միշտ
 Աստուած չ'տայ ամենեւին վիշտ:

Միշտ քեզ օգնական լինի Աստուած
 Օտարին չես խնայում հաց
 Աչքերսւմդ չերեւի ամենեւին լաց
 Միշտ առողջ դու յաւիտեան կաց:

16 Յունիսի 1886.



Այս իմ սիրուն Հայրենիք
 Եարաբ ես Քեզ ինչ անեմ
 Սրտումդ ունես գաղտնիք
 Զ'գիտեմ հնց բաց անեմ:

Քո կործանողդ ով էր
 Այնպէսն ինչք ծնաւ
 Քեզ հետ նա քնչ ոխ ունէր
 Մայրը նորան հըր սնաւ.....

28 Դեկտ. 1886.





տարի ձեռքում խաղալիք եղայ

Բնաւ չկայ մէկը պաշտպանէ ինձի.

Այս ինչ անգթութիւն է Սստուած քեզ մեղայ

Որ ստեղծել ես մի խաղալիք դու ինձի:

Օտարը ինձանից ինչով աւել է

Որ նա իշխող է իսկ ես մէկ գերի

Սրտիս մէջը կրակը վառուել է

Քիչ է մնացել ջիգեարս էրի.....

26 Դեկտ. 1886.



ոյց տուր քո երես

չերիք ինձ էրես

Մի անիլ անտես

Նինա մեղք եմ ես:

3 Մայիսի 1888




Խուր ու տրտում ծառի տակ նստած
 Ինձ ու ինձ երգել էի սկսած
 Յանկարձ մի ինչ որ ձայն հասաւ անգճիս
 Նայեցի տեսնեմ կանչում է սիրելիս:

Տխրութեան մռայլը անցաւ երեսէս
 Կայնեցի ոտքի նորա մօտ վազեցի
 Իսկոյն փաթաթուեց նա իմ վզէս...
 Կարմիր թշերը ես համբուրեցի

Ասի, այս ուր ես սիրեկան ասա
 Ինչէն է որ ես միտդ եմ եկել
 Մինչ այժմ ինձ տանջում էիր անխնայ
 Իսկ հիմա քո ոտով ես եկել:

Ասեց, ինձ յայտ չէր ուղիղ քո միտքը
 Յանկարձ սիրահարուել գիտեն անմիտքը:.....

3 Մայիսի 1888





ո այդ սիրուն պատկերդ
Մենակ ինձի չէ էրել
Զո սեւ աչք եւ ունքերդ
Շատին գերի է արել:

29 Նոյեմբ. 1889



Ենեակումըս մենակ նստած
Զբաղուած էի երգերով
Գրիչս ձեռիս բռնած
Մտածում էի արտասուելով:

Ինձ դռնից ձայն լսվեցաւ
Տուն-եկողը անունըս ասեց
Սենեակիս դուռը բացուեցաւ
Սիրեկանըս ներս վազեց:

Տեսայ ու իսկոյն վերկացայ
Նորան սիրով ընդունեցի
Խնդրեցի որ քիչ մնայ
Նորան մօտըս նստեցրեցի:

Նինիս սենեակումըս տեսայ
Նորան ես պինդ գրկեցի
Ասի վերջին տեսնելըս էսա
Քեզ սիրումեմ ես ասեցի:

18 Մարտի 1886.



Լենեմ մի անգին սիրեկան
Նա ամենուն է դուրեկան
Իմ սիրեկան սիրուն Նինան
ձիշտ լճսնին է նման:

Նա իմ կեանքը մաշեց
Ինչ իրա մօտը քաշեց
Սիրտս ու ջիգարս էրէց
Ուշքս ու միտքս կորցրեց:

Թէ մի օր չեմ տեսնում նորան
Աչքիս չէ գալիս ոչ մի բան
Գրում եմ այս տասին մալիսի
Ի պատիւ իմ Նինա կոյսի:

Մարդիկ ինչ գուզեն ասեն
Թող վրաս նրանք բամբասեն
Սիրեկանս գեղեցիկ է աննման
Իսկ ես սոխակի եմ նման:

10 Մայիսի 1886.



գուց կհրակի լինէր
Այսօր էլ շաբաթ
Եարրս ինձ կանչէր
Խմեցնէր շարձաթ:

Երեքշաբթի 30 Դեկտ. 1886





Նէ կ'լինի դարդս իմանաս
 Կամաց կամաց մօտըս գաս
 Բիշ ժամանակ մօտըս մնաս
 Էլի քո տուն հետ դառնաս:

1886.



Նդունիր իմ անկեղծ սէր
 Կ'լինեմ քեզ անճնուէր
 Ամբողջ սիրտըս քեզ նուէր
 Խոստանումեմ լինել տէր:

1886 թ.





Պղիկ ինձ չես կարող խաբել
Քո այդ սիրուն պատկերով
Ոչ էլ կարող ես ինձ էրել
Քո սև սև մեծ աչքերով.

Երկայն մազերով չես կապիլ
Իմ ձեռք և ոտքը դու խիստ
Ոչ էլ կարող ես ինձ խաբել
Քո կազմուածքովդ հանգիստ:

1886 թ.



Րդեօք չէք հաւատալ որ սիրումեմ ես
Մի օրիորդի որ է լուսնի պէս
Կը ուրախանայ ով նրան տեսնի
Վարդը նորա մօտ շուտով կ'բուսնի:

Սոխակ կը երգէ նրան տեսնելով
Ս. խ կասէ սրտում նրան նայելով
Կը չիշէ այո իւր սիրեկանին
Ով յանկարծ տեսնէ իմ սիրուն Նինին:

1886 թ.

Ահա եկաւ սիրուն գարուն
 Ահա ծաղիկները բուսան
 Ծիծեռնակները զուարթուն
 Մեզ մօտ երեւալ սկսան:

Դաշտում սիրուն աղջիկներ
 Դաստա դաստա ման են գալի
 Եւ քաղելով ծաղիկներ
 Ուրախ ուրախ պար են գալի

Բայց նրանց մէջ չի երևում
 Իմ սիրած սիրեկանս
 Որ քանի միտս է ընկնում
 Քիչ է մնում գնա ջանս:

Յունիսի 23-ին 1887.




ատու թիւն ինչ եմ արել
 Որ խռով ես ինձնից աղջիկ
 Միթէ խիղճդ է սառել
 Որ չես խղճում ինձ աղջիկ:

Գիշերը քուն չունեմ
 Յերեկը դադար
 Նստած լալիս եմ
 Ես միշտ անդադար:

Ե՛կ ինձ մեղքացի
Միթէ սիրտդ է քար
Դու ինձ մօտ արի
Կամ ինձ քո մօտ տար:

23 Յունիսի 1887



իրեկանս ինձ թողեց, գնաց օտար երկիր
Գրում եմ հիւանդ եմ, եկ ինձ՝ դու գրկիր.
Պատասխանում է. մօտըդ մնալուց ես բեզարեցի
Եկա՛յ աստեղ նոր սիրեկան ճառեցի:

Դարձեալ գրում եմ հոգևարք եմ եկ տես
Խնդրում եմ արի թէ արևըդ սիրես:
Գրում է, չեմ կարող բաժանուել նորից
Դեռ չեմ բեզարել ես նորա սէրից:

Ելի գրում եմ, հասել է վերջին ընթացք,
 Հոգևարքին խղճա արի դու ինձ տես
 Քեզ ասելիքներ ունեմ ուզում եմ ասեմ
 Տեսնեմ քեզ, յետոյ, թող հանգիստ մեռնեմ:

Գրում է խղճում եմ, բայց չեմ կարող գալ
 Միայն կարող եմ օրհնանքս քեզ տալ,
 Եթէ հոգիդ գնա երկնային դրախտ
 Խնդրեմ մի մոռանա, ինձ յիշիր այն վախտ:

Բագու, 2 Յունվ. 1894



նչ անեմ ոնց անեմ
 Գնամ գլխիս չարա անեմ.
 Ախ Խանում ջան Խանում
 Ինչի ես հոգիս հանում:

Ձուներմ դադար, ունեմ վիշտ
 Ձարչարում ես դու ինձ միշտ
 Ախ Խանում, ջան Խանում
 Ինչի ես ինձ սպանում:

1895 թ.



ի լետ նալիր հայ պատանի
Ինչի ես անհոգ նստել

Տես թէ թշնամին քանի

Քո հայրենիքն է մտել,

Քանզեց ամեն շէնքերը

Մէկ տուն էլ սաղ չմնաց

Վեր առ քո զէնքերը

Անվախ նրա դէմը կաց:

Վազիր կռվիր կ'յաղթես
Ինչ ես վախում նրանից
Գիտեմ որ դու շատ քաջ ես
Նա կը փախչի քեզանից:

1895.



2013

13490

